Հաստատում եմ

Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56

հիմնական դպրոցի տնօրեն Ս. Գալստյան

# Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային

# տարեկան ծրագիր

ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի Ստ. Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ

Դասարան՝ 8-րդ դասարան---------------

Դասղեկ՝ Ս. Ալտունյան ---------------------

2020-2021 ուսումնական տարի

# Նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում

- ✓ Ապահովել ներկա կորոնովիրուսային իրավիճակներում սովորողի անվտանգ կենսագործունեությունը. սանիտարահիգենիկ կանոնների պահպանումը, ուսումնական գործընթացի համար անվտանգ միջավայրի ապահովումը
- ✓ Տանել դաստիարակչական աշխատանք սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ
- ✓ Մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրման ապահովում՝ ըստ անհրաժեշտության
- ✓ Իրազեկել դպրոցի ներքին կարգապահական կանոններին , սովորողների իրավունքներին և պարտականություններին, աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին
- ✓ Ապահովել դպրոց-ծնող երկկողմ սերտ համագործակցություն՝ նպաստել մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը, ծնողներին ներգրավել դպրոցի հասարակական կյանքում և դարձնել մասնակից ուսումնադաստիարակչական աշխատանքներին
- ✓ Իրականացնել դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, կազմել և  դպրոցի տնօրենությանը ներկայացնել սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն
- ✓ Նպաստել սովորողի՝ քաղաքացու արժեհամակարգի ձևավորմանը, ազգային արժեքների գիտակցմանն ու արժևորմանը,  աշխարհայացքի ընդլայնմանը, ճանաչողական կարողությունների և հմտությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ազգային արժեքների

## <u>I կիսամյակ</u>

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | | | |
| I շաբաթ | ➢ Առցանց ծնողական ժողովի կազմակերպում.<br>ա) Կորոնավիրուսային հիվանդության պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում | 15.09-19.09 | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | **գործունեության կազմակերպման ուղեցույցի իրազեկում սովորողներին և ծնողներին**<br>**բ) դասարանի ծնողական խորհրդի կազմի ընտրություն**<br>**գ) կազմակերպչական հարցեր**<br>➢ **Դասագրքերի բաժանում**<br>➢ **Դասասենյակների նախապատրաստում՝ Covid -19-ի պայմաններում հաստատված ուղեցույցի կանոնների համաձայն**<br>➢ <<Գիտելիքի օր >> խորագրով դաս՝ Գիտության և դպրության օրվան նվիրված<br>➢ Զրույց աշակերտների հետ. << Ինչպես հասնել հաջողության>>: | | Գրադարանավար |
| II շաբաթ | ➢ **Սովորողների և ծնողների իրազեկում դպրոցի ներքին կարգապահական կանոններին , սովորողների իրավունքներին և պարտականություններին**<br>➢ **Դասարան նոր ընդունված սովորողների ինտեգրում**<br>➢ Զրույց՝ <<Անկախությունը՝ մեծագույն արժեք և նվաճում>> թեմայով.<br>➢ Հանդուրժողականություն. <<Եկեք զրուցենք>>:<br><br>➢ Անդրադարձ անձնական հիգիենայի կանոններին: | **22.09-26.09** | Դասղեկ |
| <u>III շաբաթ</u> | ➢ **Սովորողների և ծնողների իրազեկում աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին**<br>➢ **Առցանց հանդիպում-քննարկում ծնողների հետ՝ մանկավարժական միասնական պահանջի ապահովման նպատակով**<br>➢ Զրույց <<Ճանաչենք մեր հայրենիքը>> թեմայի շուրջ<br>ա) հայտնի և անհայտ մարդկանց հետաքրքրությունները<br>բ) մերօրյա զինվորների սխրանքները<br>գ) <<Նամակ հայ զինվորին>> | <u>**28.09-03.10**</u> | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| IVշաբաթ | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ **Անհատական աշխատանք սովորողների և նրանց ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության/ հաճախումներ, ուշացումներ, առաջադիմություն/**<br>➢ Երևան քաղաքի օրվան ընդառաջ պատմանական ակնարկ << Հին ու նոր Երևանը>> խորագրով.<br>➢ Ուսուցչի օրվան նվիրված զրույց՝ «ՈՒսուցիչ – աշակերտ փոխհարաբերությունները» թեմայով:<br>➢ Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները: | 05.10-10.10 | Դասղեկ |
| Vշաբաթ | ➢ **Խորհրդակցում դասավանդող ուսուցիչների հետ դասարանի ուսումնադաստիարակչական խնդիրների վերաբերյալ**<br>➢ Զորյանական շաբաթ.<br>ա) Ստեփան Զորյանի կյանքի պատմությունից վերցված հետաքրքիր տեղեկությունների հաղորդում<br>բ) հեքիաթների և պատմվածքների ընթերցումներ և վերլուծություններ<br>գ) զորյանական հեքիաթների և հերոսների պատկերում<br>➢ Ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցում:<br>➢ Համագործակցություն. զրույց <<Իմ շրջապատի մարդիկ>> թեմայի շուրջ: | 12.10-17.10 | Դասղեկ |
| VI շաբաթ | ➢ **Սովորողների կրթական կարիքի գնահատում**<br>**<<Սովորականի օրագրի պատառոտված պատմությունները>>** թեմայով<br>➢ Հակահամաճարակային տեղեկատվության մասին /Քովիդ և ՍՇՎ դեմ արդյունավետ պայքարի մի քանի կանոն/ | 19.10-24.10 | Տնօրենություն<br>Դասղեկ |
| VII շաբաթ | ➢ **Սովորողների նախնական** | 26.10-31.10 | |

| | | | |
|---|---|---|---|
| | **առաջադիմության արդյունքների ամփոփում, իրազեկում ծնողներին, առանձին դեպքերում քննարկում դասավանդող ուսուցիչների, անհատական աշխատանք ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության :**<br>➢ Աշխատանքը ազնվացնում է մարդուն:<br>➢ Ընկերություն, փոխօգնություն, հանդուրժողականություն թեմաների շուրջ անցկացնել զրույցներ<br>➢ Անձնական հիգիենա | | Դասղեկ |
| <u>VIII շաբաթ</u> | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br><br>➢ Աշնանային արձակուրդներ.<br>ա)<<Ճամփորդությունը շարունակվում է>> խորագրով առցանց էքսկուրսիաներ Երևանի թանգարաններում<br>➢ Առցանց հանդիպում և զրույցի անցկացում՝ <<Անվտանգության կարևորությունը համացանցից օգտվելիս>> | <u>16.11-21.11</u> | Դասղեկ |
| <u>IX շաբաթ</u> | ➢ Ձեռնարկատիրական կրթություն. <<Փոխանակում, արժեք, դրամ>><br>➢ <<Հին հայկական դրամները. Հայկական դրամի պատմությունը>> տեսանյութի դիտում և քննարկում<br>➢ Աշակերտների կարգապահությանը վերաբերվող հարցեր: | <u>23.11-28.11</u> | Դասղեկ |
| <u>X շաբաթ</u> | ➢ **Աշակերտների առաջադիմությանը վերաբերող հարցեր.աջակցել դժվար առաջադիմող աշակերտներին:** | <u>30.11-05.12</u> | <u>Դասղեկ, դասավանդող ուսուցիչներ</u> |
| <u>XI շաբաթ</u> | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ **Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ**<br>➢ Զրույց՝ <<Բնական աղետները>> թեմայի շուրջ<br>➢ բ)անհրաժեշտ կարևոր գործողությունների, միջոցառումների իրազեկում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ | <u>07.12-12.12</u> | Դասղեկ, զինղեկ՝ Մ.Միքայելյան |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| <u>XII շաբաթ</u> | ➢ Զրույց՝ <<Պահպանենք առողջությունը ճիշտ սնվելով>><br>ա) որն է առողջ սնունդը | <u>14.12-19.12</u> | Դասղեկ |
| <u>XIII շաբաթ</u> | ➢ Զրույց՝ <<Սուրբ Ծննդյան խորհուրդը>> թեմայով<br>ա) ամանորյա տոնական երգերի ուսուցում, բացիկների պատրաստում, դասարանական անկյունների ձևավորում<br>➢ **Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում, ինչ ստացանք - ինչ տվեցինք:**<br>➢ **Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը**<br>➢ **Առցանց ծնողական ժողով. իրազեկում առաջադիմության արդյունքներին**<br>➢ **1-ին կիսամյակում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը** | <u>21.12-26.12</u> | Դասղեկ, <u>Տնօրենություն, դասավանդող ուսուցիչներ</u> |

# II կիսամյակ

| | | | |
|---|---|---|---|
| <u>I շաբաթ</u> | ➢ **Էլեկտրոնային օրագրերի օգտակարությունը, հեռավար հարթակի գրանցում:**<br>➢ Աշակերտներին սովորեցնել աշխատել նորագույն տեխնոլոգիաներով, կարողանալ օգտվել հեռավար հարթակներից և ճիշտ կազմակերպել ուսուցումը: | <u>11.01-16.01</u> | Դասղեկ |
| <u>II շաբաթ</u> | ➢ **Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում դասապրոցեսում և դասամիջոցներին:**<br>➢ **Անհատական աշխատանք խնդրահարույց սովորողների հետ**<br>➢ «Ազնիվ մարդ լինելու գաղտնիքը» թեմայով զրույց:<br>➢ «Վարքը, որպես ճիշտ դրսևորվելու գործոն» թեմայի շուրջ զրույց- քննարկում : | <u>18.01-23.01</u> | Դասղեկ |
| <u>III շաբաթ</u> | ➢ **Հայոց բանակի դերը մեր ապագա սերունդների** | <u>25.01-</u> | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | **գիտակցության մեջ:**<br>➢ «Մեր հաղթանակած հայոց բանակ» զրույց թեմայի շուրջ:<br>➢ «Նամակ մեր նորօրյա հերոսներին» | 30.01 | |
| IV շաբաթ | ➢ Զրույց՝ <<Անվտանգության կարևորությունը համացանցից օգտվելիս, տեղեկատվական անվտանգություն>>: | 01.02-06.02 | Դասղեկ |
| V շաբաթ | ➢ **Հարության տոնին նվիրված զրույցներ**<br>➢ **Հանդուրժողականության դրսևորումները** | 08.02-13.02 | Դասղեկ |
| VI շաբաթ | ➢ **Թումանյանի հեքիաթների արդիականությունը մեր կյանքում: Հերոսների քննարկում**<br>➢ **Գիրք նվիրելու տոնի խորհուրդը**<br>➢ | 15.02-20.02 | Դասղեկ |
| VII շաբաթ | ➢ **Սովորողների վարքագծի խնդիրների քննարկում**<br>➢ «Ինչ հետևանքներ կունենա աշակերտների սխալ վարքագիծը» զրույց – քննարկում: | 22.02-27.02 | Դասղեկ |
| VIII շաբաթ | ➢ Ավետաբեր գարուն<br>➢ Ֆիլմերի դիտում | 01.03-06.03 | Դասղեկ |
| IX շաբաթ | ➢ **Ծնող – ուսուցիչ հարաբերությունների ուղղակիորեն ազդեցությունը աշակերտների առաջադիմության վրա:**<br>➢ «դպրոցն իմ երկրորդ տունն է, իսկ ուսուցիչը երկրուրդ մայրը » զրույց թեմայի շուրջ:<br>➢ Քննարկումներ | 08.03-13.03 | Դասղեկ |
| X շաբաթ | ➢ **Շրջակա միջավայրի պահպանումը**<br>➢ **Մաքուր պահել ոչ միայն շրջակա միջավայրը , այլ նաև իմ դասարանը:**<br>➢ Զրույց «Իմ շրջակա  միջավայրը» թեմայով: | 15.03-20.03 | Դասղեկ |
| XI շաբաթ | ➢ Ուշադրություն դարձնել կարգապահությանը և հիգենային: | 22.03-27.03 | Դասղեկ |
| XII շաբաթ | ➢ **Սովորություններ և կամք, «ոչ» ասելու նուրբ արվեստը**<br>➢ Սովորեցնել աշակետներին որոշ դեպքերում <<ոչ>> ասել:<br>➢ Զրույց այս թեմայով: | 29.03-03.04 | Դասղեկ |
| XIII շաբաթ | ➢ **«Գիրք, որ փոխեց իմ կյանքը»**<br>➢ << Գիրք՝ գիտելիքի հավերժ աղբյուր>> խորագրով զրույց: | 05.04-10.04 | Դասղեկ |
| XIV շաբաթ | ➢ **Սովորողների ընթացիկ առաջադիմության քննարկումները.**<br>➢ «Արդյոք պետք է գնահատականը » զրույց-քննարկում: | 12.04-17.04 | Դասղեկ |
| XV շաբաթ | ➢ **Հիշատակի օր.**<br>➢ **Հայրենիքս** | 19.04-24.04 | Դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | ➢ <<Մեծ Եղեռն>> թեմայով քննարկում: | | |
| <u>XVI շաբաթ</u> | ➢ **Անհատական և խմբային աշխատանքների կազմակերպում**<br>➢ Զրույց «Մեր ուժը մեր միասնականությունն է» թեմայով:<br>➢ Սփյուռք-հայրենիք՝ մեկ ուժ և մեկ ընտանիք: | **<u>26.04-01.05</u>** | Դասղեկ |
| <u>XVII շաբաթ</u> | ➢ **Հաղթանակների ամիս. Սովորողների գիտելիքներ ու պատկերացումները մեր հաղթանակների մասին**<br>➢ <<Անձնական հիգիենա>><br>➢ Զրույց թեմայի շուրջ | **<u>03.05-08.05</u>** | Դասղեկ |
| <u>XVIII շաբաթ</u> | ➢ **Աշակերտների ընտանեկան խնդիրների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա:**<br>➢ Զրույց «Հոգեբանական աջակցություն երեխաներին» թեմայով: | **<u>10.05-15.05</u>** | Դասղեկ |
| <u>XIX շաբաթ</u> | ➢ **Շրջակա միջավայրի պահպանումը**<br>➢ **Մաքուր պահել ոչ միայն շրջակա միջավայրը , այլ նաև մեր դասարանը:**<br>➢ Զրույց «Դասարանը, որպես մեր տուն» թեմայով: | **<u>17.05-22.05</u>** | Դասղեկ |
| <u>XX շաբաթ</u> | ➢ **Հայաստանի ապագան իմ ձեռքերում է**<br>➢ **Քաղաքավարություն, մշակույթ, վարվելակարգ**<br>➢ Աշակերտների դերը իրենց հայրենի երկրի ապագան կերտելու գործում: | **<u>24.05-29.05</u>** | Դասղեկ |
| <u>XXI շաբաթ</u> | ➢ **Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում**<br>➢ **Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը**<br>➢ **Առցանց ծնողական ժողով. իրազեկում առաջադիմության արդյունքներին**<br>➢ **2-րդ կիսամյակում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը** | **<u>31.05-05,06</u>** | Դասղեկ |